Երրորդ հաղորդում

Եղիսեն Քրիստոսի նախատիպն էր կյանքում շնորհքի Իր սպասավորության մեջ և Աստծու մարդ լինելով՝ վարվում էր որպես Աստծու ներկայացուցիչ, որպես Աստծու պաշտոնակատարը

Գրվածքների ընթերցում. Գ Թգ 2:19-22, 4:1–6:7

I. Եղիսեն Քրիստոսի նախատիպ է այն բանում, որ կյանքում շնորհքի հրաշքներ էր գործում՝ Գ Թգ 4:9, Ղկս 4:27.

Ա. Հին Կտակարանի նախատիպերի և նախապատկերների իրագործման առումով Քրիստոսն իրական Եղիսեն է. որպես իրական Եղիսեն՝ Տեր Հիսուսը քաղցր և հաճելի մարգարե է, օրհնության մարգարե՝ Գ Թգ 4:9, Ղկս 4:27, 7:11-17:

Բ. Եղիսեն Հին Կտակարանի մի նախատիպ է, որը ներկայացնում էր Աստծու նորկտակարանյան տնտեսությունը, որը շնորհքի մեջ է.

1. Շնորհքն Աստված է, ով մեզ համար անում է ամեն բան՝ Իրեն տալով մեզ՝ որպես մեր վայելքի՝ Հվի 1:1,14-17:
2. Այս շնորհքի արդյունքն աստվածային կյանքն է, որը հարուստ է և բարձր և ընդունակ է մեզ Քրիստոսի համաթագավորները դարձնելու՝ Հռմ 5:17:

Գ. Եղիսեի կատարած հրաշքի՝ Երիքովում ջուրը բուժելու նշանակությունը և Տեր Հիսուսի կատարած հրաշքի՝ ջուրը գինու վերածելու նշանակությունը նույնն է՝ մահը կյանքի վերածելը՝ Գ Թգ 2:4,19-22, Հվի 2:1-11:

Դ. Եղիսեն գոյություն չունեցողը որպես գոյություն ունեցող էր կոչում. նույնը սկզբունքորեն Տեր Հիսուսն արեց, երբ ամբոխին կերակրեց՝ 15:32-39:

Ե. Եղիսեն մեռածին մահից հարություն տվեց՝ կենդանացնելով մեռածին. նույնն արեց Տեր Հիսուսը՝ և՛ ֆիզիկապես, և՛ հոգևորապես՝ Գ Թգ 4:18-37, Ղկս 7:11-17, Հվի 11:41-44, 5:25:

Զ. Եղիսեն ալյուրով վայրի դդմի թույնն ի չիք դարձրեց, սկզբունքորեն նույնն արեց Տեր Հիսուսը՝ փարիսեցիների թթխմորից Իր աշակերտներին բուժելով Իրենով՝ որպես շարմաղ ալյուրով՝ Դ Թգ 4:41, Մտթ 16:12:

Է. Եղիսեն ջրի մեջ ընկած կացնի սայրը փայտի միջոցով լողալ տվեց. դա խորհրդապատկերում է այն, որ Քրիստոսն Իր խաչի միջոցով հարության մեջ վերականգնում է մեղավորների կորցրած զորությունը, որոնք ընկել են մահվան ջրի մեջ՝ Դ Թգ 6:6, Եփս 2:1-6:

Ը. Եղիսեն ուրիշների համար աստվածային բուժման հրաշքներ էր գործում, բայց Աստծու կամքով նա ինքը հրաշքով չբուժվեց. սա Պողոսի և նրա համագործակիցների փորձառությունն էր՝ Գ Թգ 13:14.

1. Պողոսը Տրոֆիմոսին հիվանդ թողեց Միլետոսում՝ առանց նրա համար բուժիչ աղոթք կիրառելու և իր բուժման շնորհը չկիրառեց,

որպեսզի ստամոքսի հիվանդությունից բուժի Տիմոթեոսին՝ Բ Տմթ 4:20, Ա Տմթ 5:23, Գրծ 19:11-12:

2. Պողոսն ու նրա համագործակիցները չարչարանքի այդ ժամին ներքին կյանքի կարգավարժանքի ներքո էին, ոչ թե արտաքին շնորհի զորության.
   ա. Առաջինը կյանքի շնորհքի հետ է կապված. վերջինը՝ զորության շնորհի, հրաշագործ զորության:
   բ. Եկեղեցու անկման և հանուն եկեղեցու չարչարվելու ժամանակ անհրաժեշտ է ոչ այնքան զորության շնորհը, որքան կյանքի շնորհքը՝ Բ Տմթ 4:22:

Թ. Եղիսեն մեռավ իր մարմնում, սակայն դեռ ծառայում էր իր հոգում՝ մեռածին կենդանացնելու համար՝ Գ Թգ 13:21.
   1. Նույնիսկ մեռած Եղիսեն կարող էր կենդանացնել մարդկանց:
   2. Սա Քրիստոսի հարության նկարն է՝ Հվի 11:25, Գրծ 2:24, Փլպ 3:10.
      ա. Ով որ դիպչում է Նրան, կենդանանում է:
      բ. Վերածնունդը ներառում է այն, որ հոգևորապես մեռած մարդը դիպչում է մեռած և հարություն առած Քրիստոսին և կենդանանում՝ տես Հվի 5:25, Եփս 2:1-6ա:

II. Մովսեսի, Սամուելի և Պողոսի պես Եղիսեն՝ Աստծու մարդը, վարվում էր որպես Աստծու ներկայացուցիչը, որպես Աստծու պաշտոնակատարը երկրի վրա՝ Գ Թգ 4:9.

Ա. Եհովան Մովսեսին ասաց, որ նրան փարավոնի համար Աստված է դարձրել՝ Ելց 7:1ա.
   1. Ի դեմս Մովսեսի՝ Աստված ուներ մեկին, որ կներկայացներ Իրեն և կկատարեր Իր կամքը. Մովսեսը երբեք փարավոնի հետ ինքնուրույն չէր խոսում, այլ միշտ ասում էր այն, ինչ ասում էր Տերը՝ 3:16-18, 5:1:
   2. Իրականում, փարավոնը ոչ թե Մովսեսին՝ Աստծու դեսպանին էր լսում և նրա հետ գործ ունենում, այլ Աստծուն էր լսում և Աստծու հետ գործ ունենում:

Բ. Սամուելն Աստծու ներկայացուցիչն էր, որ երկրի վրա իշխում էր Նրա ժողովրդին. այդպիսին լինելով՝ Սամուելն Աստծու պաշտոնակատարն էր՝ Ա Թգ 1:11, 2:35, 7:3, 8:22.
   1. Սամուելը կարող էր Աստծու պաշտոնակատարը լինել, քանի որ նրա էությունը և Աստծու սիրտը մեկ էին՝ 2:35.
      ա. Նա մի մարդ էր, որ Աստծու սրտի համաձայն էր. այսինքն՝ նա Աստծու սրտի պատճենը՝ կրկնօրինակն էր:
      բ. Սամուելի ապրելակերպն ու աշխատանքը այն ամենն իրականացնելու համար էին, ինչ կար Աստծու սրտում:
   2. Սամուելն Աստծու պատգամախոսն էր և Աստծու կառավարիչը, և հետևաբար նա Աստծու պաշտոնակատարն էր:

Գ. Պողոսը՝ Աստծու մարդը, իր սպասավորության ընթացքում Աստծու պաշտոնակատարն էր, երբ մխիթարում էր հավատացյալներին, վար-

վում Աստծու պարգությամբ, արտահայտում Աստծու խանդը և Քրիստոսի դեսպանը լինում, որպեսզի իրագործի հաշտեցման սպասավորությունը՝ Բ Կրթ 1:3-4, 12, 11:2, 5:20.

1. Կապանքներում Պողոս առաքյալի երկար ու անբարեհաջող ճանապարհորդության ողջ ընթացքում Տերը նրան պահեց Իր բարձրության վրա և ունակ դարձրեց ապրելու տագնապի ոլորտից շատ հեռու եղող մի կյանքով՝ Գործ 27:13–28:9.
   ա. Այս կյանքը լիովին արժանապատիվ էր, մարդկային առաքինությունների ամենաբարձր չափանիշներով, որոնք արտահայտում էին ամենագերազանց աստվածային հատկանիշները, մի կյանք, որը նման էր այն կյանքին, որը Տեր Հիսուսն Ինքն էր տարիներ առաջ ապրել երկրի վրա:
   բ. Սա Հիսուսն էր, ով Իր աստվածայնորեն հարստացված մարդկայնությամբ կրկին ապրում էր երկրի վրա:
   գ. Սա սքանչելի, գերազանց ու խորհրդավոր Աստվածամարդն էր, ով ապրում էր Ավետարաններում, և հիմա շարունակում էր Գործքում Իր բազմաթիվ անդամներից մեկի միջոցով ապրել:
2. Նոր Կտակարանի հավատացյալները կարող են լինել նույնը, ինչ Պողոսը՝ գործառելով որպես Աստծու պաշտոնակատարը՝ Ա Տմթ 1:16:

III. Որպես Աստծու ընտրած, փրկագնած ու վերածնած մարդիկ, որոնք մեկ են Աստծու հետ, կազմված են Աստծով, ապրում են Աստծուն, արտահայտում են Աստծուն, շարժվում են Աստծու հետ և ներկայացնում Աստծուն, մենք կարող ենք գործառել որպես Աստծու պաշտոնակատարը՝ Եփս 1:4-5.

Ա. Որպես Աստծու ընտրյալ, փրկագնած և վերածնած մարդիկ՝ մենք պետք է Աստծու հետ մեկ լինենք՝ Ա Կրթ 6:17.
1. Աստվածաշնչի հիմնական սկզբունքն այն է, որ Աստված Իր տնտեսության մեջ Իրեն մեկ է դարձնում մարդու հետ և մարդուն մեկ է դարձնում Իր հետ՝ Հվի 15:4:
2. Աստված ցանկանում է, որ աստվածային կյանքն ու մարդկային կյանքը միանան և դառնան մեկ ապրելակերպ ունեցող մեկ կյանք՝ Ա Կրթ 6:17:

Բ. Մենք պետք է կազմված լինենք Աստծով՝ Եփս 3:17ա, Կոս 3:10-11.
1. Աստծու տնտեսությունն այն է, որ Նա Իրեն բաշխի մեր էության մեջ, որպեսզի մեր էությունը կազմվի Նրա էությամբ և Նրա էության հետ մեկ կազմություն լինի՝ Եփս 3:17ա, 4:4-6:
2. Աստվածային կյանքում և աստվածային կյանքի օրենքի աշխատելու շնորհիվ Աստված կներդրվի մեր մեջ, և մենք կկազմվենք Նրանով Իր կյանքի և բնության մեջ՝ Հռմ 8:2, 6, 10-11, 29:

Գ. Լինելով այն անձինք, որոնք մեկ են Աստծու հետ և կազմված են Աստծով, մենք պետք է ապրենք Աստծուն՝ Փլպ 1:21ա.
1. Ըստ Իր տնտեսության՝ Աստծու մտադրությունն այն է, որ Իր

տարրը, Իր էահիմքը և Իր բնության բաղադրիչները ներդնի մեր էության մեջ, որպեսզի մենք ապրենք Իրեն՝ Հռմ 8:2, 6, 10-11:

2. Մեր ամենօրյա կյանքն իրականում պետք է լինի Աստված Ինքը և հետևաբար լինի անընդհատ Աստծուն ապրող կյանք՝ Ա Թսղ 2:12, Ա Կրթ 10:31:

Դ. Մենք պետք է արտահայտենք Աստծուն՝ Ծնդ 1:26, Բ Կրթ 3:18, Հռմ 8:29, Կղս 3:10.

1. Աստծու հավիտենական մտահղացումն Իրեն՝ որպես մեր կյանքի, մեր մեջ ներդնելն է, որպեսզի մենք Իրեն արտահայտենք՝ Եփս 1:11, 3:11, Բ Տմթ 1:9:
2. Աստծու նպատակն Իր տնտեսությունում այն է, որ մենք մեկ լինենք Իր հետ և ապրենք Իրեն Իր ընդհանրական արտահայտության համար՝ Ա Կրթ 6:17, Փլպ 1:21ա, Եփս 1:22-23:

Ե. Լինելով այն անձինք, որոնք արտահայտում են Աստծուն, մենք պետք է շարժվենք Աստծու հետ՝ Հս 1:1-9, 6:1-16.

1. Աստծուն անհրաժեշտ էր, որ Իսրայելի զավակները համագործակցեին Իր հետ Իր շարժման մեջ Իր տնտեսությունում՝ որպես մեծ անիվում՝ 1:1-9, 6:1-16:
2. Մենք պետք է մեկ լինենք Աստծու հետ Նրա սրտի ցանկության և երկրի վրա Նրա շարժման մեջ՝ Եփս 1:5, 9, Հյտ 14:1-4:

Զ. Երբ շարժվում ենք Աստծու հետ, պետք է ներկայացնենք Աստծուն՝ Ծնդ 1:26-28.

1. Աստծուն Իր իշխանությամբ ներկայացնելու համար մենք պետք է Աստծուն արտահայտենք կյանքում. քանի որ Ահարոնն Աստծուն արտահայտելու համար ուներ հարության կյանքը, նա Աստծուն ներկայացնելու իշխանություն ուներ՝ խ. 26, 2:9, Թվց 17:1-8:
2. Աստծու համար աշխատելու պատշաճ ճանապարհն Աստծուն ներկայացնելն է՝ Ելց 7:1-2:

Է. Եթե մենք մեկ լինենք Աստծու հետ, կազմված լինենք Աստծով, ապրենք Աստծուն, արտահայտենք Աստծուն, շարժվենք Աստծու հետ և ներկայացնենք Աստծուն, կկարողանանք գործառել որպես Աստծու պաշտոնակատար.

1. Աստված ի վիճակ է մեզ դարձնելու այնպիսին, ինչպիսին Ինքն է կյանքով, բնությամբ, արտահայտությամբ և գործառույթով՝ Իր տնտեսությունն իրագործելու համար՝ Կղս 3:4, Բ Պտ 1:4, Եփս 3:9:
2. Եղիսե մարգարեն, լինելով Աստծու մարդ իր սպասավորության մեջ, վարվում էր որպես Աստծու ներկայացուցիչ, որպես Աստծու պաշտոնակատար. այսօր մենք՝ Քրիստոսին հավատացողներս, կարող ենք նույնը լինել՝ գործառելով Իր տնտեսության մեջ որպես Աստծու պաշտոնակատար՝ Դ Թգ 4:9, Ա Տմթ 6:11, Բ Տմթ 6:11, Բ Տմթ 3:17:

© 2022 Living Stream Ministry